

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԶՀ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հայաստանի Հանրապետության ոռոգման համակարգում վերջին տարիներին իրականացվում են բարեփոխումներ, որի հիմքում դրված է հավասարակշռված սակագնային քաղաքականության, ջրի հաշվառման, տեխնիկական համակարգի ներդրման և հաշվապահական հաշվառման բարելավման, հասույթի և կորուստների որոշման մոտավոր գնահատման մեթոդից իրատեսական և ճշգրիտ հաշվարկային մեթոդի անցման խնդիրների իրականացումը: Ամփոփելով ոլորտում առակ խնդիրները և դասակարգելով նրանք ըստ հրատապության, 1993 թվականին կազմվեց «Ոռոգման համակարգերի վերակազմման» ծրագիրը, որի իրականացման համար մոտավոր հաշվարկներով անհրաժեշտ էր 70 մլն ԱՄՆ դոլար: Պետական բյուջեից համարավոր չէր հատկացնել նմանատիպ միջոցներ և ելնելով այդ խնդրի հրատապությունից դիմվեց Համաշխարհային Բանկի խմբի անդամներին: Նրանց կողմից ծրագրի ֆինանսավորման համար համաձայնությունը ստանալուց հետո, կրճատելով ծրագրի որոշ տարեր, վերջնականորեն այն գնահատված 51 մլն ԱՄՆ դոլար: ԶՀ կառավարությանն տրամադրվեց այդ վարկը՝ ծրագիրը ֆինանսավորելու համար: Ծրագրի շրջանակներում կազմակերպվող աշխատանքների կոորդինացման համար ստեղծեց «Ծրագրի իրագործման գրասենյակ», որի պահպանման ծախսերը պետք է ֆինանսավորվեր վարկային միջոցներից:

Ծրագրով նախատեսված էր իրականացնել.

- մայր և միջտնտեսային ջրանցքների վթարային հատվածների ու կառուցվածքների վերակառուցումը,
- ջրամբարների վթարային հիդրոհանգույցների, 4 խոշոր պոմպակայանների, 160 խորքային հորերի վերականգնումը և նորերի հորատումը, ինչպես նաև 15 հազ. հա տարածության վրա փորձնական ջրօգտագործողների սպառողական ընկերությունների(ՋՍԸ) հիմնումը և ներտնտեսային ցանցերի վերականգնումը Հայաստանի

Հանրապետության ոռոգման համակարգերի շահագործման պահպանության ծախսերի մասնակի ֆինանսավորումը, ոռոգման համակարգի զարգացման նոր ծրագրի նախապատրաստում:

- մեխանիկական եղանակով ոռոգման ջրի մատակարարումից ինքնահոս ոռոգմանն աստիճանաբար անցումը:

Վերոհիշյալ նպատակների համար «Ոռոգման համակարգի վերականգնման» ծրագրի շրջանակներում Սյունիքի մարզի (Մեղրիի և Կապանի տարածաշրջանում), Վայոց Ձորի (Եղեգնաձորի), Լոռու մարզի (Թումանյանի և Սպիտակի), Արագածոտնի մարզի (Նաիրիի և Աշտարակի) շուրջ 20.0 հազ. հա հողատարածությունների վրա պետք է մեխանիկական եղանակով ոռոգման ջրի մատակարարումից կատարել անցում ինքնահոս ոռոգման: Այդ գործընթացը թույլ կտա տարեկան տնտեսել 25.0 մլն կՎտ/ժամ էլեկտրաէներգիա(1):

Վերոհիշյալ վարկային ծրագրի շրջանակներում, Ոռոգման համակարգի, վերոհիշյալ հիմնախնդիրների լուծումից հետո նախապատրաստական աշխատանքներ պետք է տարվեն ջրային սեկտորի զարգացման նոր ծրագրի մշակման ու իրագործման ուղղությամբ: Այն հնարավորություն կտա ապահովել ոռոգման ջրի կորուստների կրճատումը, կարգավորել ջրամատակարար և ջրօգտագործող սուբյեկտների փոխհարաբերությունները, բարձրացնել հանրապետության ոռոգման համակարգում ջրային ռեսուրսների օգտագործման կառավարման արդյունավետությունը, իրականացնել շահագործող ոռոգման համակարգերի ՊՓԲԸ-ների կառուցվածքային բարեփոխումներ, առողջացնել դրանց ֆինանսական վիճակը:

Ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի նախապատրաստական աշխատանքների 1-ին փուլում կիրականացվեն ջրամբարների պատվարների հետազոտական աշխատանքներ, դրանց տեխնիկական վիճակի և զտիչ ռեժիմի հետազոտումներ, հեղեղային ջրհեռների ուսումնասիրություններ, ջրամբարների շահագործման կազմակերպման և բնապահպանական միջոցառումներ, իսկ 2-րդ փուլում՝ 22 վթարային ջրամբարների պատվարների վերականգնման աշխատանքներ:

Թվարկված նախապատրաստական աշխատանքների ավարտից հետո կճշգրտվի ծրագրի երկրորդ փուլում ընդգրկվող կառույցների ու հիդրոհանգույցների ցանկը:

Ոռոգման համակարգի զարգացման ծրագրի երկրորդ փուլում նախատեսվում է՝ ջրանցքների օգտակար գործողության գործակցի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, հողերի բերրիության բարձրացմանն ու մելիորատիվ վիճակի բարելավմանն ուղղված Արարատյան հարթավայրի ցամաքուղային համակարգի վերականգնում՝ մոտ 20 հազ. հա վրա, տարեկան մինչև 90 մլն կվտժամ էլեկտրաէներգիա տնտեսելու նպատակով 40 պոմպակայանների տակ ընկած հողատարածքների մեխանիկական ոռոգման փոխարինումը ինքնահոս ոռոգման:

Կարևոր հանգամանք է նաև ջրի ինքնարժեքի հաշվարկումը, որը ծրագրով հատկացված վարկերի վերադարձնելիությունը և տոկոսադրույքների վճարումներն ապահովելու նպատակով սահմանվում է՝ սկսած վարկի վերադարձման տարվանից (2008 թ.) ոռոգման ջրի մեծածախ սակագնի մեջ կհաշվարկվեն տվյալ տարում վերադարձվող վարկերի և վճարվող տոկոսադրույքների գումարները:

Այսպիսով, նշված ներդրումների կատարումը և ծրագրով նախատեսված բարեփոխումների իրականացումը հնարավորություն կտա ապահովել հետևյալ արդյունքները՝ հանրապետությունում ներկայումս չոռոգվող 24.0 հազ. հեկտար հողատարածությունները ոռոգելու ինքնահոս եղանակով և դնելու գյուղատնտեսական ակտիվ շրջանառության մեջ, որը հնարավորություն կտա լրացուցիչ ստանալու տարեկան շուրջ 5.0 մլրդ. դրամի բուսաբուծության համախառն արտադրանք, ինքնահոս եղանակով ոռոգվող հողատարածությունները ավելացնել 20.0 հազ. հեկտարով և տարեկան տնտեսել 67.8 մլն. կվտժամ էլեկտրաէներգիա՝ 1695 մլն. դրամ արժեքով, նվազեցնել 1 խ.մ. ոռոգման ջրի գինը 1.5-2.0 դրամով, հանրապետության 8 ոռոգման համակարգերի պետական փակ բաժնետիրական՝ դուստր ընկերություններ կաշխատեն լրիվ ինքնաձեռնարկով, որը հնարավորություն կտա ներդնել ոռոգման ջրի տարբերակված մեծածախ սակագները, բացառել խաչաձև սուբսիդավորումը:

Համաշխարհային Բանկի վարկի հաշվին իրականացվող «ՀՀ ոռոգման համակարգի վերականգնման» ծրագրի շրջանակներում ապահովվում է 4 ջրամբարների (Կառնուկ, Սառնաղբյուր, Ապարան, Մանթաշ) – 4 խոշոր պոմպ-կայանների (Ար–աշարի I – II աստիճան, Մխչյանի I – II աստիճան) – 8 ոռոգման համակարգերի, ինչպես նաև մելիորատիվ նշանակության մյուս ջրամբարների վերականգնումը – անվթար

շահագործումը. կկրճալվեն ոռոգման ջրի կորուստները – տարեկան կխնայվի 50 մլն. խ.մ. ջուր – դրա շնորհիվ ոռոգման համակարգի օգտակար գործողության գործակիցը կհասցվի 0.52-ի: Ծրագրի լիարժեք իրագործման շնորհիվ հնարավոր կլինի ապահովել հանրապետության ոռոգելի հողերի օգտագործումը – ապահովել տարեկան շուրջ 60 մլրդ. դրամի բուսաբուծության համախառն արտադրանքի կայուն ստացումը: Այս բոլորի արդյունքում հնարավոր կլինի ամրապնդել գյուղատնտեսության արտադրության կայունացման ու աճի միտումները – 1994-1996 թթ. միջին ցուցանիշի համեմատությամբ (1996թ. համադրելի գներով) 2002 թ. ապահովել գյուղատնտեսության համախառն արտադրանքի 9.2 տոկոսի աճ, այդ թվում՝ բուսաբուծությունում-10.1, անասնապահությունում-7.7 տոկոս: Ավելի նպաստավոր պայմաններ կստեղծվեն հացահատիկային մշակաբույսերի արտադրության համար, որոնց ծավալը նույն ժամանակաշրջանում կավելանա 14.0 տոկոսով, բանջարաբուստային կուլտուրաներինը՝ 13.1 տոկոսով, կարտոֆիլինը՝ 6.5 տոկոսով – այլն: Կերարտադրության ծավալների ավելացման հաշվին կապահովվի անասունների գլխաքանակի աճն ու մթերավորության բարձրացումը:

Համակարգի արդյունավետության բարձրացման գործընթացում կարելի առանձնացնել հաշվառման համակարգի կատարելագործումը՝ ոռոգման ջրի հաշվառման տեխնիկական համակարգի ներդրումն – հաշվապահական հաշվառման ստանդարտների անցումը Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներին(ՀՀՀՄ, 2000 թվական):

Հաշվառման համակարգը պետք է ընդգրկի համակարգչային ծրագրավորմամբ տեխնիկական, տնտեսական, կազմակերպչական, ֆինանսական, իրավական բնույթի փոխկապակցված միջոցառումների համալիրը, ներառյալ համակարգչային ցանցի ստեղծումը – ՀՀՀՄ-ին համապատասխան ծրագրի ներդրումը:

Ուսումնասիրելով հիմնախնդիրը, մեր կողմից կատարվել է հետ–յալ եզրակացությունը, որ համակարգի հաշվապահական հաշվառման կատարելագործման հիմնական ուղիներն են՝ ոռոգման ջրի դիմաց վճարները բանկային համակրգով գանձելու մեխանիզմների լիարժեք գործադրումը, ՀՀՀՄ-ին համապատասխան համակարգչային ծրագրերի ներդրում, ջրի իրացման հաշվառման – ֆինանսական հոսքերի համակարգչային ծրագրերի հետ փոխկապակցում, բոլոր մակարդակներում ջրի հաշվեկշռի կազմում, ջրամատակարարման – ջրահեռացման ֆինանսական հոսքերի մոդելի ներդրում:

Հարկ ենք համարում առանձնահատուկ նշել ոռոգման ջրի հաշվառման տեխնիկական համակարգի ներդրման միջոցառումները, որոնք են՝

ա) բաժանորդների տվյալների բազայի ճշգրտում և համակարգումը,

բ) ոռոգելի հողատարածքների, ոռոգման ջրի համակարգերի գույքագրման աշխատանքների իրականացումը,

գ) հիմնական միջոցների վերագնահատման աշխատանքների իրականացումը,

դ) ջրի իրացման հաշվառման համակարգի ստեղծումը, մինչև լիարժեք հաշվառման տեխնիկական համակարգի կայացումը, մատակարարվող ոռոգման ջրերի հասույթի հաշվարկման ժամանակավոր կարգի գործադրումը,

ե) ջրաչափերի, ստուգիչ և կարգավորող սարքերի տեղադրումը,

զ) տվյալների հաշվառման համակարգչային ցանցի ստեղծումը:

Համակարգի հաշվապահական հաշվառման կատարելագործման ուղիներից կարևորվում են հետևյալ միջոցառումների անցկացումը.

ա) ոռոգման ջրի դիմաց վճարները բանկային համակարգով զանձեւում մեխանիզմների լիարժեք գործադրումը,

բ) հաշվապահական հաշվառման նոր ստանդարտների համակարգչային ծրագրերի ներդրում, և ջրի իրացման հաշվառման ու ֆինանսական հոսքերի համակարգչային ծրագրերի հետ փոխկապակցումը,

գ) բոլոր մակարդակներում ջրի հաշվեկշռի կազմումը,

դ) ջրամատակարարման և ջրահեռացման ֆինանսական հոսքերի մոդելի ներդրումը:

Վերոհիշյալ միջոցառումների լիարժեք կատարումը, ըստ մեր ուսումնասիրությունների, թույլ կտա բարձրացնել համակարգի տնտեսական արդյունավետությունը և կնպաստի ներկայումս համակարգում առաջացած ֆինանսական ճեղքվածքի մակարդակի նվազեցմանը:

Գրականություն

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ

26 մարտի 1998 թվականի թիվ 117: